Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 1(49), ապրիլ, 27-42
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.1.027

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ ԱՌԱԾՆԵՐՈՒՄ ՈՒ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ. ԼԵԶՎԻ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

ՆԱՐԵ ՇԱԼՈՒՆՑ*
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածի առանցքը առածային խոսույթում լեզվի հասկացութայնացման միջոցով մարդկային հատկանիշի որոշարկման ու բնութագրման լեզվաճանաչողական ու փիլիսոփայական վերլուծությունն է: Համեմատական մեթոդի օգնությամբ մարդակենտրոն հայեցակերպի շրջանակում քննության են առնվում ֆրանսերեն և հայերեն առածներ ու ասացվածքներ, որոնք շեշտադրում են խոսքի՝ իբրև լեզվի կիրառման դերը մարդկային բնութագրի վերհանման գործում: Մասնավորապես՝ լեզվի փիլիսոփայության ու իրականության փոխառնչության տիրույթում իրականության կառուցարկման ու խոսքի իմաստաստեղծ գործառույթի դիրքերից բնորոշվում են ճշտախոսությունն ու ստախոսությունը, իսկ խոսքի ազդեցության ու ներուժի կարևորումը ճանաչողական-գործաբանական հարթությունում ուղղորդում է զգուշության տիրույթ: Առածներում իրականության գոյաբանական, իմացաբանական ու բարոյագիտական արտապատկերման ճանապարհը ճանաչողությունն է, որը թույլ է տալիս մարդկային էությունը որոշարկել լեզվական միավորի ու հասկացույթի հարաբերակցության համատեքստում, իսկ խոսքը մետալեզվական մակարդակում *լեզու* հասկացույթի միջոցով սահմանում է մարդկային էությունը: Լեզվաճանաչողական մեկնությունը առածային խոսույթի փիլիսոփայության իմաստային շրջանակի որոշարկման միջոց է, իսկ հասկացութային դաշտում փոխաբերությունների միջոցով առածներն ու ասացվածքները ներամփոփում են լեզվի ու վերջինիս կիրառման՝ խոսքի միջոցով մարդկային հատկանիշների բնորոշման ուղիներ: Այսպիսով, առածային խոսույթի լեզվաճանաչողությունը լեզվափիլիսոփայության մեկնման ճանապարհ է, իսկ միջմշակութային հայեցակերպի լույսի ներքո՝ փոխաբերական պատկերումները ցուցանում են նշյալ ուղիների զուգահեռման ու հատման տիրույթները:

Բանալի բառեր – *լեզվափիլիսոփայություն, ճանաչողություն, հասկացութային փոխաբերություն, առածային խոսույթ, մարդկային հատկանիշ, ճշտախոսություն, ստախոսություն, զգուշություն*

* **Նարե Շալունց** – ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Наре Шалунц – аспирант кафедры французской филологии ЕГУ
Nare Shalunts – PhD Student at the Chair of French Philology, YSU
Էլ. փոստ՝ nare.shalunts@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0003-3606-261X

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.01.2026
Գրախոսվել է՝ 16.02.2026
Հաստատվել է՝ 02.04.2026
© The Author(s) 2026

Լեզվաբանության հարացույցում ճանաչողական ու փիլիսոփայական հայեցակերպերի զուգահեռումը արդի լեզվաբանության առանցքային հիմնահարցերից է, որի շրջանակում կարևորվում է իմաստի կառուցարկման հասկացութային ուղղվածությունը: Ճանաչողական դիտանկյունն ակնհայտորեն ապահովում է լեզվական արտահայտության և մտածողության կապը: Լեզվափիլիսոփայական կարգերի տարորոշման համատեքստում Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնը կարևորում են մարդկային լեզվամտածողության ճանաչողական կաղապարումը, մասնավորապես՝ ճանաչողության զգայական ու հոգեզգայական շեշտադրումը[1]: Առածի իմաստային շրջանակի հիմքում փոխաբերական պատկերն է, մասնավորից ընդհանուր անցման բնույթը, և այս համատեքստում ընդգծվում է փոխաբերության և փոխանունության դերը: Լեզվաբանական մտքի զարգացման տարբեր շրջափուլերում առածների ճանաչողական հայեցակերպը նախ դիտարկվել է փոխաբերության[2], այնուհետև՝ փոխանունության[3] դիտանկյունից: Համակողմանի քննության արդյունքում կարելի է պնդել, որ առածները համադրային միավորներ են՝ հաշվի առնելով վերջիններիս փոխներթափանցման, ինչպես նաև սահմանների որոշարկման գործոնը:

Փոխաբերության հասկացութային բնույթը ենթադրում է աղբյուր և թիրախ տիրույթների միջև տեղաշարժ: Փոխաբերության ուսումնասիրման ճանաչողական հայեցակերպն ընդգծում է հասկացութային մակարդակը, և այս համատեքստում հասկացույթները մարդկային ճանաչողության կարևորագույն տարրեր են, իմաստակիր միավորներ[4]:

Լեզվաճանաչողական և լեզվափիլիսոփայական հետազոտությունների տիրույթում հարկ է ընդգծել լեզվի առանցքային դերը ինչպես լայն իմաստով իրականության կառուցման ու մեկնաբանման, այնպես էլ մարդկային բնութագրի կերտման հարցում: Իբրև իրականության ու մտածողության համադրման միջոց՝ լեզուն բացորոշում է նշյալ առանցքների փոխառնչությունն ու հատման կետը: Մարդակենտրոն հայեցակերպի դիրքերից լեզուն կառուցում է մարդկային էությունն ու բնութագիրը: Նկատի առնելով վերոնշյալը՝ հետազոտության շրջանակում դիտարկել ենք լեզվի միջոցով մարդկային հատկանիշների դրսևորումները, քանի որ մարդու էությունը որոշարկելու լավագույն միջոցը լեզուն է: Հիրավի, առածներն ու ասացվածքները ճանաչողության տի-

---

[1] Տե՛ս **Lakoff G., Johnson M.** *Philosophy* in the Flesh: The Embodied Mind and Its Challenge to Western Thought. New York, Basic Books, 1999:

[2] Տե՛ս **Lakoff G., Turner M.** More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor. Chicago, The University of Chicago Press, 1989:

[3] Տե՛ս **Günter R., Kövecses Z.** Towards a Theory of Metonymy // Klaus-Uwe Panther and Günter Radden (eds.), Metonymy in Language and Thought, Amsterdam, Philadelphia: Benjamins, 1999, էջ 17-59:

[4] Տե՛ս **Lakoff G., Turner M.** More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor. Chicago, The University of Chicago Press, 1989, էջ 111:

րույթում լայն իմաստով ուրվագծում են մարդկային հատկանիշների բազմերանգ գունապնակ, համակցում կոնկրետ և վերացական տիրույթներ: Այստեղ հարց է ծագում՝ ո՞րն է այն կամուրջը, որ ճանապարհ է բացում նշյալ տիրույթների միջև, այլ կերպ ասած՝ ինչպե՞ս կարող է լեզվական հանրույթի կոլեկտիվ փորձը՝ իբրև տեքստ, առած՝ հյուսված բառերից[5], լեզվական խնայողության միջոցով արտահայտել հարաժամանակային ճշմարտություն, մասնավորից ընդհանուր անցման պրիզմայով որոշակի առարկաների միջոցով փոխաբերաբար մատնանշել վերացական երևույթներ ու հատկանիշներ: Հենց սա էլ առածաբանության առանցքային հիմնահարցն է լեզվի փիլիսոփայության ճանաչողական–գործաբանական հարթությունում:

Վերլուծական փիլիսոփայության ու ճանաչողական գիտության շրջանակում լեզվի ու փոխաբերության հարաբերակցությունը դիտարկվում է տեսողական ընկալման միջոցով. փոխաբերության մեկնակետը զգայական է: Հիմք ընդունելով Լ. Վիտգենշտեյնի «բադ-ճագարի» պատկերի մեկնաբանման երկակի տեսանկյունը՝ փոխաբերությունը դիտարկվում է իբրև «այլ հայացք» փաստացի իրականությանը: Իրականության փաստացի ընկալումը՝ *տեսնել այն, ինչ որ է*, տարբերվում է սուբյեկտիվ դիտանկյունից՝ *տեսնել իբրև*: Ուստի «տեսողական դիտանկյունը» շեշտադրում է *ԸՆԿԱԼԵԼԸ ՏԵՍՆԵԼ Է* հասկացութային փոխաբերությունը, և տվյալ պարագայում *ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԱԼԵԼԸ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ Է*[6]*:*

Մ. Ջոնսոնն իր հերթին ընդգծում է, որ լայն իմաստով փիլիսոփայական կարգերը փոխաբերական են՝ հաշվի առնելով վերացարկման գործոնը, և կառուցում լեզվի ու մտածողության փիլիսոփայության փոխաբերական հայեցակերպը, համաձայն որի՝ *ՄՏԱԾԵԼԸ ԽՈՍԵԼ Է*[7]*:*

Լեզվի ու իրականության փոխառնչության տիրույթում ճանաչողական դիտանկյունից տեղեկույթի փոխանցման ու իրականության մեկնաբանման կաղապարման մեկնակետը իրականության ընկալումն է, ինչի լեզվական առկայացումը կարող է ընթանալ երկու ուղղությամբ: Մի դեպքում խոսքային դրսևորումը կարող է համընկնել իրականությանը, մյուսում՝ գիտակցված կերպով խեղաթյուրել այն, ուստի խոսքային վարքագծի միջոցով մարդու բնորոշումը տվյալ դեպքում աղերսվում է հակադիր հատկանիշների՝ ճշտախոսության ու ստախոսության լեզվաճանաչողական կաղապարների քննությանը: Դիտարկենք հետևյալ առածները.

---

[5] «Տեքստ» եզրույթն առաջացել է լատիներեն textus (հյուսվածք) բառից:

[6] Տե՛ս **Mácha J.,** Metaphor in Analytic Philosophy and Cognitive Science // Revista Portuguesa de Filosofia, T. 75, Fasc. 4, Modelos e Metáforas: Arte e Ciência / Models and Metaphors: Art and Science, 2019, էջ 2282:

[7] Տե՛ս **Johnson M.,** Philosophy's Debt to Metaphor // The Cambridge Handbook of Metaphor and Thought, edited by Raymond W. Jibbs, 2008, էջ 49:

Il n'y a que la vérité qui blesse // Ճշմարտությունն աչք է ծակում:

Քննության առարկա առածները նախ շեշտում են ճշմարտության, ճշտախոսության հասկացութայնացումը մարմնի ու ցավի ճանաչողության միջոցով. ֆիզիկական ցավը հիմնավորում է ճշմարտության իմացաբանական փորձառության արդյունքում հոգեզգայական ցավը, ուստի աղբյուր տիրույթը ֆիզիկական վնասվածքն է, վերքը, իսկ թիրախը՝ ճշմարտությանն առերեսվելիս հոգեզգայական «վերքը»: *ՃՇՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳ Է, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՋԵՆՔ Է, ԻՍԿ ՃԻՇՏ ԽՈՍԵԼԸ ՎԻՐԱՎՈՐԵԼ Է* հասկացութային փոխաբերությունների հիմքերի որոնման ճանապարհին առաջ է գալիս հետևյալ հարցադրումը. ինչո՞ւ է ճշմարիտ խոսքը վիրավորում: Ճանաչողության միջոցով պատասխանի փնտրտուքն ուղեկցում է իրականության ու սպասելիքի փոխառնչության տիրույթ: Երբ իրականությունը չի համընկնում սպասելիքին, և դրանց միջև առկա է խզում, ճշմարտությունը ցավ է պատճառում: Առածների զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ ֆրանսերենում ցավի ճանաչողությունն առկայանում է *blesser* բայի միջոցով, որի իմաստային շրջանակը վիրավորել, խոցել, ցավեցնելն է, իսկ հայերենում՝ հանկարծակի, սուր ցավի հետ մտազուգորդվող *ծակել* բայի օգնությամբ: Հայերեն տարբերակում ճշմարտությունը վնասում՝ *ծակում է աչքը,* իսկ վերջինս տեսողական ընկալման, իմացության միջոցի դրսևորումն է, և տվյալ դեպքում ճշմարտության թիրախը հենց ընկալումն է իմացաբանական դիտանկյունից, կամ՝ *ԻՄԱՆԱԼԸ ՏԵՄՆԵԼ Է*:

Toute vérité n'est pas bonne à dire // Ամեն բան դրուստ չի ասվի // Դուզ (ճիշտ) խոսողի գլուխը ծակ է:

Վերոնշյալ ասացվածքներն ու առածը վերհանում են ճշտախոսության հնարավոր հետևանքները՝ նկատի առնելով այն, որ ճշմարտության լեզվական առկայացումն աղերսվում է մարդկային հատկանիշների, ինչպիսիք են իմաստությունը, զգուշությունն ու չափավորությունը, ինչը ենթադրում է խոսքի ու լռության, ասելիքի ու գաղտնիքի համակշռում: Այս համատեքստում ճշմարտությունը հզոր ուժ է, հնարավոր վտանգ, իսկ խոսքն այդ ուժը փոխադրում է հասարակական տիրույթ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առածների ու ասացվածքների լեզվաճանաչողական մեկնությունը *ՃՇՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳ Է* հասկացութային փոխաբերության դաշտում է: Ֆրանսերեն ասացվածքը *bon* ածականի միջոցով գնահատողական բնույթ է հաղորդում ճշտախոսությանը: Հարկ է ընդգծել, որ ճշմարտությունն օբյեկտիվ իրականությունն է, որը փաստականի տիրույթում է, իսկ ասացվածքը գնահատական է փոխանցում փաստի լեզվական առկայացմանը՝ դիտարկելով ճշմարտության ու խոսքային ակտի փոխառնչությունը: Տվյալ դեպքում ածականը կարծես զտում է խոսքը բարոյական դիտանկյունից: Ժխտման լեզվաճանաչողական հայեցա-

կերպն ասացվածքներում առաջ է բերում ընդհանուրի տիրույթում բացառություն դիտվող դիպվածների ամբողջությունը: Այսպես, *dire* և *ասվել* բայերի շրջանակում նախ առանձնացվում է ենթատիրույթ՝ ասել ճշմարտությունը, ընդ որում՝ *toute* և *ամեն* բնորոշիչների միջոցով ընդհանրացվում է *ճշմարտության* շրջանակը՝ ներառելով բոլոր դեպքերը, մինչդեռ ժխտումը *(n'est pas bonne à dire, չի ասվի)* ընդհանրականը փոխակերպում է մասնակիի՝ որոշ ճշմարտությունների, և ճանաչողական դաշտում վերահսկում է ճշմարտության լեզվական դրսևորումը: Հայերեն երկրորդ առածն ուղղակիորեն ցուցանում է մարդուն և շեշտադրում վերջինիս հատկանիշի՝ ճշտախոսության հնարավոր վտանգի լեզվական դրսևորումը (*գլուխը ծակ*): Ուստի, ճշտախոսությունն ու ազնվությունը չեն երաշխավորում անվտանգություն, ավելին՝ հասարակական տիրույթը նույնիսկ կարող է պատժել ազնվությունը, քանի որ վերջինս ի զորու է մատնանշելու հասարակական իրականության բացասական կողմերը և խարխլելու համակարգի թվացյալ ներդաշնակությունը: Բարոյական ու հասարակական դիտանկյունից զսպման առանցքը ոչ թե ճշմարտությունն է, այլ հատկանիշը՝ ճշտախոսությունը:

La verité est cachée au fond du puits // La vérité comme l'huile vient au-dessus (բառացի թարգմանությամբ՝ Ճշմարտությունը թաքնված է ջրհորի խորքում // Ճշմարտությունը յուղի նման վերև է բարձրանում):

Վերոնշյալ առածներում ճշմարտությունը հանդես է գալիս իբրև ենթակա սուբյեկտայնացման դիրքերից և ունի տեղակայում տարածության մեջ: Տարածական ուղղահայաց սխեմայի շրջանակում մի դեպքում այն տեղորոշվում է ներքևում՝ խորքում՝ ցուցանելով գաղտնի ու անհասանելի բնույթը, մյուսում՝ վերևում՝ մակերեսին, և առաջ բերում ի հայտ գալու անխուսափելիության փաստը: Ճշմարտության շարժման տեսողական ընկալումը իմացական տիրույթում վերջինիս ճանաչողական ընկալման արտահայտությունն է: Հասկացութային փոխաբերության վերլուծությունն առածներում ցույց է տալիս, որ *ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՔՆՎԱԾ ԱՌԱՐԿԱ Է*, ընդ որում՝ *ԻՄԱՆԱԼԸ ՏԵՍՆԵԼ Է*: Լեզվական մակարդակում *cachée au fond du puits (ջրհորի խորքում թաքնված)* կառույցում *ջրհոր* հասկացույթը՝ իբրև աղբյուր տիրույթ, մտազուգորդվում է խավարի, անտեսանելիության հետ, այլ կերպ ասած՝ ջրհորի խորքը իրականության անհասանելի տիրույթն է, իսկ թիրախ տիրույթը գաղտնի, անիմանալի ու թաքնված ճշմարտությունն է: Ներակայման համատեքստում խավարին հակադրվում է լույսը՝ իմացությունը, ճշմարտության բացահայտումը, իսկ խորքում եղածը բացահայտելը ճանաչողական ու մտավոր ջանքի արտահայտությունն է, իմացաբանական դիտանկյունից անհասանելիության կերպափոխումը: Մարդկային հատկանիշի որոշարկման ու խոսքային հաղորդակցման համատեքստում առածներում խոսքի պրիզմայով ճշմարտության լեզվաճանաչողության ու լեզվափիլիսոփայության քննությունը ցույց է

տալիս, որ քննության առարկա առաջին առածում *ԽՈՍՔԸ ՋՐՀՈՐ Է*, իսկ ճշմարտությունը թաքնված է խոսքի խորքում, խոսքը կարող է քողարկել ճշմարիտը, այլ կերպ ասած՝ խոսակիցը պետք է կռահի ճշմարիտը, ջրհորի խորքից դուրս բերի այն, մինչդեռ երկրորդ առածում *ԽՈՍՔԸ ՀԵՂՈՒԿ Է*, և ճշմարտությունը յուղի պես բարձրանում է մակերես, ի հայտ է գալիս, ինքնին արտացոլվում՝ չնայած քողարկմանը: Հատկանշական է, որ *ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՂ Է* հասկացութային փոխաբերությունն առկայանում է համեմատության ոճական հնարի միջոցով՝ *la vérité comme l'huile:* Յուղի հատկանիշները վերագրվում են ճշմարտությանը. այն ջրի երես է բարձրանում՝ բացահայտվում, ուստի մակերեսը տեսանելի շերտն է: Ֆիզիկական տիրույթում յուղի ու ջրի հակադրությունը իմացաբանության շրջանակում ճշմարտության ու կեղծիքի, գաղտնիի ու տեսանելիի հարաբերակցության առնչությունն է: Այսպիսով՝ առածները վերհանում են ճշմարտության հակադիր պատկերներ՝ *cachée au fond du puits*, որը քողարկման արտահայտություն է, և *vient au-dessus,* որը շարժման միջոցով ներկայացնում է ճշմարիտի երևան գալը, և մտավոր կաղապարման փոխաբերական պատկերումն առկայանում է շարժման միջոցով:

Ստախոսության՝ իբրև մարդկային հատկանիշի բացասական հարանշանակային իմաստային դաշտի քննությունն իրականացրել ենք ֆրանսերեն ասացվածքի ու հայերեն առածի օրինակով.

Le menteur n'est jamais cru, même quand il dit la vérité // Սուտ ասողի տունը կրակ ընկավ, չհավատացին:

Նախ, ստախոսությունը դիտարկվում է իբրև մարդկային բացասական հատկանիշ, որը հասարակական ճանաչողության հասկացութային տիրույթում կայուն ու դժվար փոփոխելի պիտակ է: Տվյալ դեպքում ստելը հանգեցնում է գրեթե անուղղելի հատկանիշի ձևավորման, և այս համատեքստում ասացվածքն ու առածը շեշտադրում են բարոյական ինքնության, վարքագծի ու հասարակական ընկալման, վստահության ուղղակի կապը: Հատկանշական է նաև, որ ճշմարտության ընկալումն իբրև ճշմարտություն տարորոշվում է ոչ թե ասույթային մակարդակում, այլ արտալեզվական գործոնների համալիր ամբողջության շրջանակում՝ նկատի առնելով «ճշտախոսի» վարքագծի կաղապարի անցյալի հետագիծը, ինչն էլ բնորոշում է վերջինիս ինքնությունը: Մասնավորապես, եթե ստախոսությունը իբրև մարդկային հատկանիշ դառնում է կայուն կարգ անձի բնորոշման առումով, ապա փաստացի ճշմարտությունն արտաբերելն անգամ ճանաչողական տիրույթում չի կարող փոխակերպել կարգը, քանի որ անցյալում ասված ստերը խոսակցի ընկալումներում աղերսվում են նաև ներկա ասույթներին՝ նույնիսկ ճշմարիտ իրականությունն արտացոլող: Ճշտախոսության դիպվածը դիտարկվում է ստախոսության հաս-

կացութային մակարդակում, ուստի նոր ճշմարիտ ասույթը ոչ թե փոխակերպում է շղթան, այլ ինքն է ընկալման մակարդակում փոխակերպվում ստի, ինչն էլ հանգեցնում է պարադոքսի՝ *ՍՈՒՏԸ ՃԻՇՏ Է,* իսկ *ՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՃՇՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Է:* Հղում է կատարվում ոչ թե ճշմարտության հաղորդակցման տվյալ դիպվածին, այլ ինքնության հաստատված բնութագրիչին:

Ասացվածքում ու առածում պատճառահետևանքային կապի վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզվամշակութային կաղապարների զուգահեռման արդյունքում առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես՝ ֆրանսերենում ասացվածքն ուղիղ դատողության արտահայտություն է, ոչ պատկերավոր լեզվական ասույթ, որի հիմքում ճշմարտության լեզվական դրսևորմանը չհավատալն է, մինչդեռ հայերեն առածը մի քանի բառում ամփոփում է մի ամբողջ պատկերավոր պատում՝ կառուցված իրադարձություն-արձագանք հաջորդական շղթայի հիման վրա: *Տունը կրակ ընկնել* բառակապակցությունը կոնկրետ դիպվածի արտահայտությունն է, իսկ առածում դրսևորվում է իբրև հաղորդակցական ակտ, քանի որ ենթադրում է վտանգի մասին ահազանգում, ուստի *ԽՈՍՔԸ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ Է:* Առածում ֆիզիկական աղետը դիտարկվում է ստի պրիզմայով, և ճանաչողության հասկացութային մակարդակում արդեն ձևավորված բնորոշիչը՝ ստախոս, գերիշխում է իրադարձության ընկալման վրա: Ներակայման համատեքստում մարդկային հատկանիշը՝ ստախոսությունը, լայն իմաստով աղերսվում է վստահության բացակայությանը, և տվյալ պարագայում հասկացութային փոխաբերությունը հետևյալն է. *ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՍՈՒՐՍ Է:* Իրականության դաշտում տունն այրվում է, իսկ զուգահեռ ճանաչողական իրականությունում ստախոսի հասարակական վստահելի ինքնության կառույցն արդեն «այրվել է», նա վստահություն չունի, և «այրման» երկմակարդակ հարացույցի շրջանակում՝ հասարակականից դեպի ֆիզիկական տիրույթ, վստահության՝ սպառված ու «այրված» ռեսուրսի կորուստը հանգեցնում է ճանաչողական ընկալման տիրույթում ճշտախոսության փոխակերպման: Լեզվական մակարդակում ֆրանսերենում խոսքային ակտ-արձագանք, իսկ հայերենում իրադարձություն-արձագանք շղթաների հարաբերակցությունը խաչաձև է. ֆրանսերենում առաջին պլանում արձագանքն է *(le menteur n'est jamais cru),* իսկ հայերենում՝ իրադարձությունը (*սուտ ասողի տունը կրակ ընկավ):* Ճշմարիտ իրականությունը ներկայացվում է փոխաբերական պատկերի միջոցով *(տունը կրակ ընկնել),* սակայն շոշափելի աղետի ահազանգին արձագանքը *չհավատալն* է, քանի որ *սուտ ասողի* վարքագծի կաղապարը խոսակցի ճանաչողական ընկալման տիրույթում անփոփոխ է:

On attrape plus vite un menteur qu'un voleur // Սուտը ճամփա չունի: // Ստի ոտները կարճ են:

Վերոնշյալ առածները լայն իմաստով աղերսվում են ստի գոյաբանությանը՝ ստի «կյանքը» ներկայացնելով իբրև ճամփորդություն: Տարածության մեջ շարժումը ձախողվում է, քանի որ հակասում է բարոյական ու իմացաբանական

տիրույթում իրականության գոյաբանական հայեցակերպին: Ընդ որում՝ եթե ֆրանսերեն առածում ստախոս մարդու ճամփորդության ձախողման պատճառը արտաքին ազդեցությունն է, ապա հայերեն առածներում սուտը չի դիմակայում ներքին էության պատճառով: Ֆրանսերեն առածը շեշտում է՝ ավելի արագ գողին կբռնես, քան ստախոսին: Տվյալ դեպքում ստախոսը ճշմարտությունը շղարշում է ստով, ուստի գողոնը համեմատվում է ստի հետ, գողության հետքերը՝ խոսքում տրամաբանական անհամապատասխանությունների հետ, և մարդկային ճանաչողությունն ունակ է խոսքային վարքագծում հեշտորեն բացահայտել անճշտությունները: Առածում հանցանքի բացահայտման դյուրինության աստիճանակարգումն առկայանում է *plus vite que* լեզվական կառույցով, որում արագությունը հեշտության արտահայտությունն է:

Հայերեն առածներում սուտը մարդկային կերպարանք է ստանում՝ *ՍՈՒՏԸ ՄԱՐԴ Է*: Տարածության մեջ շարժումը ենթադրում է տարածում, հաղորդակցում, և սուտը՝ իբրև գործող անձ, ցանկանում է իմացաբանական դաշտում փոփոխել ընկալումները: Տվյալ դեպքում տարածությունը մտքի տիրույթն է, հաղորդակցական շղթան ու իմաստի հոսքի կառուցարկման ճանապարհը, որով փորձում է շարժվել սուտը, սակայն ձախողում է իրականությանն ու ճանաչողությանը հակասելու պատճառով: Հայերեն առաջին առածը հիմնված է *ՍՈՒՏԸ ՃԱՄՓՈՐԴ Է* հասկացութային փոխաբերության վրա, սակայն իմացաբանական ճանապարհին առաջխաղացման հնարավորություն չկա, քանի որ սուտը համահունչ չէ իրականության օբյեկտիվ կառույցին. այդ իսկ պատճառով ճանաչողական ճամփորդությունը տրամաբանական դիտանկյունից ուղղություն չունի: Երկրորդ առածը շեշտում է ստի՝ իբրև մարդկային կերպարի ֆիզիկական տկարությունը, ինչը թիրախ տիրույթում ճանաչողական հիմնավորվածության բացակայության արտահայտությունն է: *Կարճ ոտները* ենթադրում են շարժման սահմանափակություն՝ նկատի առնելով տարածության ու ժամանակի փոխառնչության դիտանկյունը, քանի որ *ճամփան* և *կարճ ոտները* տարածական ուղղվածությանը զուգահեռ առաջ են բերում ժամանակային սահմանափակում: Սուտը երկար ժամանակ չի կարող գոյատևել, և հայերեն առածներում *ԺԱՄԱՆԱԿԸ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ Է*:

Il faut qu'un menteur ait bonne mémoire // Սուտ խոսողի լեզուն կարճ կլինի:

Վերոնշյալ ասացվածքն ու առածը ստախոսի *(menteur, սուտ խոսող)* բնութագրական դրսևորումներ են, որոնց քննությունը ցույց է տալիս, որ ֆրանսերենում ստախոսի հաջողության բանալին լավ հիշողությունն *(bonne mémoire)* է, իսկ հայերենում՝ *կարճ լեզուն:* Մի դեպքում ստախոսության՝ իբրև մարդկային հատկանիշի որոշարկումն առկայանում է մտավոր տիրույթում՝ հիմք ընդունելով հիշողությունը իբրև ճանաչողական գործընթաց, մյուս պարագայում լեզվի միջոցով շեշտադրվում է խոսքային հաղորդակցման դաշտը: Բարոյական դիտանկյունից ստախոսության դատապարտումն իրականանում է ստի

ճանաչողական գործառութային սահմանափակման ընդգծմամբ: Մասնավորապես՝ մարդկային հիշողությունն անսահման ու անխափան պահոց չէ այն առումով, որ երբեմն կարող է «սայթաքել», իսկ խոսքում զսպվածությունը՝ չենթարկվել «սանձահարման», ուստի սուտը հակասում է մարդկային ճանաչողական ու հաղորդակցական կաղապարին և դիտարկվում կարողությունների սահմանից դուրս. ճանաչողական-գործաբանական ներուժի կարևորման տեսանկյունից առկա է բարոյական տիրույթում զգուշության ուղերձ:

Ֆրանսերեն ասացվածքում *ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՄՈՒՐՄ Է* հասկացութային փոխաբերության վերլուծությունը ցույց է տալիս, որ *bon* ածականը ոչ թե դիտարկվում է իբրև բարոյագիտական կարգ, այլ ցույց է տալիս ճանաչողական ռեսուրսի՝ հիշողության բավարար քանակը: Ստելը ճանաչողական գործընթաց է, քանի որ աղերսվում է հիշողությանը: Հաշվի առնելով այն, որ ճշմարտության պարագայում մտապահումը հեշտ է, քանի որ այն համընկնում է օբյեկտիվ իրականությանը, իսկ սուտը իրականության սուբյեկտիվ մեկնաբանություն է, հիշողությունը՝ որպես ստերի պահոց, փոքր ծավալի պարագայում կհանգեցնի սահմանափակման, իսկ իբրև ռեսուրս ոչ բավարար քանակը՝ ստերի շղթայից անհամապատասխան ընտրության և ի վերջո ստի վերհանման: Հայերեն առածում *ԽՈՍՔԸ ԼԵԶՈՒ Է* հասկացութային փոխաբերության մեկնակետը մարմնի ճանաչողության աղբյուր տիրույթն է: Լեզվի կարճությունը խոսքում զսպվածության արտահայտությունն է, քանի որ շատախոսությունը կարող է առաջ բերել ստի բացահայտում: Այս առումով հայերենում առկա է *լեզուն կարճ* դարձվածքը՝ *ոչ շատախոս, պահվածքով համեստ, նկուն* իմաստով[8]: Ենթադրական ապառնի ժամանակաձևն ընդգրկում է ժամանակային լայն տարածություն՝ հատելով ժամանակի չափման միակողմանի ուղին:

A beau mentir qui vient de loin // Իրենց գեղից մարդ չկա, փչում է:

Քննության առարկա առածներում ֆիզիկական հեռավորությունը ենթադրում է իմացության դաշտում հեռավորություն ճշմարտությունից, ուստի առածները հիմնված են *ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ Է* և *ԻՄԱՆԱԼԸ ՏԵՄՆԵԼ Է* հասկացութային փոխաբերությունների վրա: Աշխարհագրական հեռավորությունը պատճառն է, որն առաջ է բերում ստախոս վարքագծի դրսևորում: Ընդ որում՝ ֆրանսերեն առածի առաջին պլանում հետևանքն է *(a beau mentir)*, իսկ հայերենում՝ պատճառը *(իրենց գեղից մարդ չկա):* Հարկ է նշել, որ առածներում տարածությունը ներքին տիրույթում ենթադրում է իմացություն, իսկ արտաքին դաշտում՝ անորոշություն: Մասնավորապես՝ ֆրանսերեն առածում *ՍՏԱԽՈՍԸ ՃԱՄՓՈՐԴ Է,* որ եկել է հեռվից և կարողա-

[8] Տե՛ս **Բեղիրյան Պ.,** Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր. , ԵՊՀ հրատ. , 2011, էջ 541:

նում է հեշտորեն ստել, քանի որ չկա խոսքի հավաստիության ստուգման հնարավորություն, խոսակիցը ծանոթ չէ *հեռվում* առկա ճշմարտությանը: Ավելին, *beau* ածականի կիրառությունն ապահովում է գեղագիտական մակարդակից անցումը դեպի արդյունավետություն՝ ստելու հմտություն և դյուրինություն: Ինչ վերաբերում է հայերեն առածին, *գեղը* դիտարկվում է որպես իմացության տիրույթ, որի սահմաններից ներս կամ դուրս լինելը որոշարկում է ճշմարտության իմացությունը: Տվյալ դեպքում *գեղից մարդը* ճշմարտությունն իմացողն է, որի բացակայությունը հասարակական համատեքստում ենթադրում է ստելն արգելող հարկադրանքի բացակայություն: Հատկանշական է առածում *փչել* բայի գործածությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն փոխաբերական իմաստով նշանակում է *ստել, սուտ ասել*[9], ուստի *ՍՈՒՏԸ ՕԴ Է* հասկացութային փոխաբերության լեզվաճանաչողությունը ցույց է տալիս, որ փչելը դիտարկվում է իբրև ստի տարածում հասարակական միջավայրում: Տվյալ պարագայում կարևոր է նաև անտեսանելիությունը, քանի որ խոսքային հաղորդակցման ժամանակ ստի բնութագրիչը հենց անտեսանելի կողմն է, չընկալվելը իբրև սուտ: Ճանաչողական-գործաբանական դաշտում առածներն արտահայտում են զգուշացում ստախոսից:

Այժմ անդրադառնանք առածներում *լեզու* հասկացույթի միջոցով զգուշության՝ իբրև մարդկային խոհեմության արտահայտության դրսևորմանը:

Les paroles s'envolent, les écrits restent // Parole jetée prend sa volée
Ինչ որ գրեցիր գրչով, չես կարող քանդել բրչով: // Խոսքը քանի բերանդ է, քոնն է, բերանիցդ ելավ, քոնը չէ:

Հարկ է փաստել, որ վերոնշյալ առածներում դիտարկվում է խոսքի ու գրի հակադիր պատկերը, ընդ որում՝ բանավոր խոսքի անցողիկ, իսկ գրավորի՝ մնայուն բնույթը, ինչը լայն իմաստով աղերսվում է նաև ժամանակային հարացույցի շեշտադրմանը: Ֆրանսիական առածային լեզվամշակույթում խոսքը հասկացութային մակարդակում դիտարկվում է *թռիչք* հասկացույթի միջոցով, *s'envoler, volée* լեզվական միավորների դրսևորմամբ: Ֆրանսերեն առաջին առածում *ԽՈՍՔԸ ԹՌՉՈՒՆ Է* հասկացութային փոխաբերության մտազուգորդային կապի տիրույթում թռչնի թռիչքը տեսադաշտից հեռանալու պատկերի նմանությամբ արտապատկերվում է ասված խոսքի՝ լսողության դաշտից անհետանալու, մոռացության մատնվելու իրողության վրա *(les paroles s'envolent)*, ինչին հակադրվում է գրի մնայուն բնույթը *(les écrits restent):* Շարահյուսական զուգահեռության գործածումն ընդգծում է հակադիր էությունների առկայությունը: Ի տարբերություն առաջին առածի, որում *թռիչք* հասկացույթն անմիջականորեն ցուցանում է խոսքի անցողիկությունը, քննության առարկա երկրորդ

[9] Տե՛ս **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան հրատ., 1976, էջ 1539:

առածում թռչելը մտազուգորդվում է խոսքի տարածման հետ, խոսք, որն արդեն դուրս է խոսողի վերահսկողությունից: Գրի մնայունությունը, հարատևությունն ու անխախտելիությունը բնորոշող ֆրանսերեն առաջին առածին զուգահեռ հարկ է դիտարկել հայերեն առաջին առածը, որի լեզվաճանաչողության հիմքում *ԽՈՍՔԸ ԿԱՌՈՒՅՑ Է, ԳՐԵԼԸ ԿԱՌՈՒՑԵԼ Է* փոխաբերություններն են. գրիչը ստեղծում է կառույց, որը բրիչը չի կարող քանդել: *Կառուցում* և *քանդում* հասկացությունների հակադրությունն առածում դիտարկվում է *գրիչ* և *բրիչ* լեզվական միավորների կիրառությամբ, ընդ որում՝ վերջիններիս նմանահնչությամբ: Ինչ վերաբերում է հայերեն երկրորդ առածին, այն կարելի է դիտարկել ֆրանսերեն երկրորդ առածի հետ զուգահեռով, քանի որ երկու առածներն էլ ընդգծում են խոսքի տարածումը և արտահայտում զգուշություն: Հայերեն առածում *ԽՈՍՔԸ ՈՒՆԵՑՎԱԾՔ Է*, ինչը կարելի է քննել տարածաժամանակային հայեցակերպի հաշվառման տիրույթում: Մասնավորապես՝ առածի բաղադրիչ առաջին ասույթը *(խոսքը քանի բերանդ է, քոնն է)* ներառում է դեռ չարտաբերված խոսքը, որը տարածության դիտանկյունից մտազուգորդվում է *ներսի*, իսկ ժամանակային կտրվածքով՝ *առաջի* հետ, մինչդեռ երկրորդ ասույթը *(բերանիցդ ելավ, քոնը չէ)* առաջ է բերում հակադիր պատկերը՝ ընդգծելով *դուրսը և հետոն*, ինչն էլ հանգեցնում է «ունեցվածքի կորստի»:

Առածային խոսույթում զգուշության մեկնությունը լեզվի ճանաչողության միջոցով արտապատկերում է իրականության կառուցման, փոփոխման տիրույթում խոսքի ուժի հայեցակերպը:

Quand on parle du loup, on en voit la queue // Quand on parle du soleil, on en voit les rayons // En parlant du soleil on voit ses rayons

Շան անունը տուր, փայտը վերցրու: // Անունը տուր, խալիչեն փռիր // Անունը տուր, սուփրեն գցիր:

Նշյալ առածների քննությունը պատճառ–հետևանք սխեմայի շրջանակում խոսքից իրականություն վերափոխման արտահայտությունն է: Բառացի ընթերցմամբ առածներում նշվում է՝ հաղորդակցման ժամանակ որևէ մեկի անունը հիշատակելու արդյունքում վերջինս հայտնվում է: Լայն իմաստով առածների իմաստաճանաչողական կաղապարն աղերսվում է *տաբու* լեզվական իրողությանը, համաձայն որի՝ մարդիկ խուսափում են որոշ երևույթների լեզվական առկայացումից՝ դրանք իրականություն չդարձնելու սնահավատության հանգամանքով պայմանավորված: Միջմշակութային համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ֆրանսերեն առածներում խոսքին *(parler)* հաջորդում է խոսելու օբյեկտի՝ խոսողի տեսադաշտում հայտնվելը *(voir)*, ընդ որում՝ տեսանելի է ոչ թե ամբողջը, այլ մասը: Հայերեն առածների պարագայում խոսքին *(անունը տալ)* հաջորդում է սուբյեկտի գործողությունը *(փայտը վերցնել, խալիչեն փռել, սուփրեն փռել):* Ֆրանսերեն առածների հիմքում *ԽՈՍԵԼԸ ՏԵՄՆԵԼ Է* հասկացութային փոխաբերությունն է:

Նշյալ առածների լեզվաճանաչողության համատեքստում առանցքային նշանակություն ունի ամբողջ–մաս համըմբռնման տարրերի հարաբերակցությունը: Մասնավորապես՝ *loup, queue* (գայլ, պոչ) և *soleil, rayon* (արև, շող) հասկացույթների՝ իբրև ամբողջի և մասի դիտանկյունից առածներում պոչը դիտարկվում է գայլի, իսկ շողը՝ արևի ներկայության ցուցիչ, այլ կերպ ասած՝ մասը բավարար է ամբողջի ներկայությունը հաստատելու համար: Հարց է ծագում՝ ինչո՞ւ է մասը տեսանելի, ոչ թե ամբողջը: Նվազագույն ճանաչողական կաղապարի օգնությամբ առածներն ընդգծում են խոսքի ոչ թե ուղիղ, այլ անուղղակի ազդեցությունը հետքի, նշանի պատկերման միջոցով: Հայերենում խոսքին հաջորդում է յուրօրինակ սոցիալական ծիսակարգ. *ՊԱՇՏՊԱՆՎԵԼԸ ՓԱՅԸ ՉԵՌՔԸ ՎԵՐՑՆԵԼ Է, ԴԻՄԱՎՈՐԵԼԸ ԽԱԼԻՉԵՆ ՓՌԵԼ Է, ՀՅՈՒՐԱՍԻՐԵԼԸ ՍՈՒՓՐԵՆ ՓՌԵԼ Է* հասկացութային փոխաբերությունների համատեքստում զգուշությունը մի դեպքում զգոնության, մյուսում պատրաստականության հորդոր է:

Եթե վերոնշյալ առածները պատճառ–հետևանք սխեմայի դիտանկյունից շեշտադրում են խոսքն իբրև պատճառ, որին հաջորդում է հետևանքը, ապա առածային խոսույթում դիտարկվում է նաև հակառակ պատկերը, երբ խոսքը հետևանքի լեզվական առկայացումն է, որին նախորդում է պատճառը: Առածային խոսույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշյալ սխեմայի պարագայում խոսելուն նախորդում է մտածելը մտածողության ու խոսքի հարաբերակցության դաշտում:

Il faut tourner sept fois la langue dans la bouche avant de parler // Առաջ միտք արա, հետո խոսք ասա:

Ֆրանսերեն առածում խոսելուց առաջ լեզուն բերանում պտտելը *(tourner la langue dans la bouche),* ընդ որում՝ յոթ անգամ *(sept fois),* զգուշավորության ու խոհեմության ցուցիչ է, ճանաչողական մակարդակում մարմնի միջոցով ինքնակարգավորման արտահայտություն: Հասկացութային դաշտում այն ծանրութեթև անելու, մտածելու առկայացումն է, այլ կերպ ասած՝ *ՄԻՏՔԸ ԳՈՐԾ Է*, մասնավորապես՝ *ՄՏԱԾԵԼԸ Լ ԵՋՈՒՆ ԲԵՐԱՆՈՒՄ ՊՏՏԵԼ Է*: Յոթ թվականի կիրառումը ցուցանում է խոսքի տիրույթում սայթաքելուց՝ սխալվելուց խուսափելու համար անհրաժեշտ պտույտների թիվը: Քանակական ցուցիչը անատոմիական տիրույթից դուրս մտածումի, զուսպ ու հավասարակշիռ մարդու խոսքի առկայացման նախապայմանն է: Հայերեն ասացվածքում մտածել-խոսել հաջորդական շղթայի արտակա դրսևորումը *միտք անել* և *խոսք ասել* հարադիր բայերի հրամայական եղանակի խոնարհումն է, և բայերը շաղկապվում են *առաջ* և *հետո* մակբայների օգնությամբ:

Ինչպես նշեցինք, վերոնշյալ առածն ու ասացվածքը խոսքի ու մտածողության հարաբերակցության տիրույթում ցուցանում են խոսելուց առաջ մտածելու կարևորությունը: Իսկ ի՞նչ է լինում, երբ «մտածումը չի նախորդում խոսքին»:

Առածային խոսույթը որոշարկում է նաև անզգույշ խոսքի բացասական հետևանքները:

Mieux vaut glisser du pied que de la langue // Ոտքով ընկնողը կելնե, լեզվով ընկնողը չելնե:

Երկու լեզվամշակույթներում անզգույշ խոսքը դիտարկվում է իբրև սայթաքում. առածները հիմնված են միևնույն պատկերի և հասկացութային փոխաբերության վրա՝ *ԱՆԶԳՈՒՅՇ ԽՈՍԵԼԸ ՍԱՅԹԱՔԵԼ Է:* Աղբյուր տիրույթը ֆիզիկականի սահմաններում շարժումն է, սայթաքումը, իսկ թիրախ տիրույթը՝ անզգույշ խոսքն ու վերջինիս հետևանքը: Առածներում միջտիրույթային կապի ցուցիչ է *ոտք* և *լեզու* հասկացույթների կիրառումը, ընդ որում՝ մտազուգորդային կապի արդյունքում հասկացույթները լայն իմաստով աղերսվում են գործողությանը. առաջինը ենթադրում է շարժում ֆիզիկական աշխարհում, իսկ երկրորդը՝ խոսք հասարակական աշխարհում: Այս պարագայում հայերեն առածը կարծես լրացնում է ֆրանսերենին և մեկնում համեմատության էությունը՝ ոտքով սայթաքելը նախընտրելի է լեզվով սայթաքելուց, *քանի որ* առաջինի դեպքում կարող ես բարձրանալ, իսկ երկրորդի պարագայում՝ ոչ: Այլ կերպ ասած՝ շարահյուսական զուգահեռությունը կառուցված է ընկնել–ելնել հակադրության հիման վրա, և ըստ այդմ՝ *ՍԽԱԼ ՎԵԼԸ ՍԱՅԹԱՔԵԼ Է, ՈՒՂՂՎԵԼԸ ՎԵՐ ԿԵՆԱԼ Է, ԴՐԱԿԱՆԸ ՎԵՐև Է, իսկ ԲԱՅԱՍԱԿԱՆԸ ՆԵՐՔև Է:*

Un coup de langue est pire qu'un coup de lance // Թրի վերքը կլավանա, լեզվինը չի լավանա:

Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա // Օձի կծածը կսաղանա, լեզվի կծածը չի սաղանա:

Վերոնշյալ առածները ճանաչողական դիտանկյունից ֆիզիկական ցավը արտապատկերում են խոսքի պատճառած հոգեզգայական ցավի տիրույթ: Ֆրանսերեն և հայերեն առաջին առածներում համապատասխանաբար *lance (նետ)* և *թուր* հասկացույթերի կիրառման միջոցով խոսքային ակտը դիտարկվում է իբրև պայքար, հարձակում, բռնություն: Ուստի նշյալ առածներում *ԽՈՍԵԼԸ ՀԱՐՁԱԿՎԵԼ Է,* իսկ *ԽՈՍՔԸ ԶԵՆՔ Է,* ինչը պատճառ–հետևանք սխեմայի շրջանակում ենթադրում է վիրավորում, վերքի առկայություն: Հասկացութային փոխաբերության մասնավորեցման մակարդակում ֆրանսերենում *ԽՈՍԵԼԸ ՀԱՐՎԱԾԵԼ Է, ԽՈՍՔԸ ՆԵՏ Է,* հայերենում *ԽՈՍԵԼԸ ՎԻՐԱՎՈՐԵԼ Է, ԽՈՍԵԼԸ ԿՏՐԵԼ Է,* իսկ *ԽՈՍՔԸ ԹՈՒՐ Է:* Առածը խաղարկում է *coup de langue* լեզվական միավորի ուղիղ և փոխաբերական իմաստները՝ նկատի առնելով նախ պատկերավորության շրջանակում *coup de lance* արտահայտության հետ համեմատական զուգահեռը (բառացի՝ լեզվի հարված և նիզակի հար-

ված), ինչպես և պատկերի հիման վրա և դրանից դուրս իմաստային նրբերանգը՝ կծու, խայթող խոսք: Եթե նշյալ առածները խոսքը դիտարկում են պայքարի ու զենքի պրիզմայով, ապա հայերեն երրորդ առածում խոսքի պատճառած վնասն առկայանում է կենդանու՝ օձի կծածի հետ համեմատության միջոցով: *ԽՈՍԵԼԸ ԿԾԵԼ Է, ԽՈՍՔԸ ՕՁ Է* հասկացութային փոխաբերությունների միջոցով տարորոշվում են միջտիրույթային առնչությունները: Հարկ է նշել, որ *օձ* հասկացույթը մտազուգորդվում է վտանգի հետ, և այս համատեքստում առածը չափազանցության օգնությամբ լեզվի վնասը տեղորոշում է առավել վտանգավոր տարածքում: Ֆրանսերեն առածը արտակա համեմատության օգնությամբ *(….est pire que…. (….ավելի վատ, ավելի վնասակար է….))* գնահատողական բնույթ է հաղորդում՝ բաղդատելով լեզվի և նիզակի հարվածները: Ինչ վերաբերում է հայերեն առածներին, ֆիզիկական ու լեզվական վնասը շեշտադրվում է շարահյուսական զուգահեռության ու հակադրության միջոցով *(կլավանա-չի լավանա, կսաղանա-չի սաղանա):*

Այսպիսով՝ քննության առարկա առածներն ու ասացվածքները շեշտադրում են խոսքի իմացաբանական, բարոյական ու հասարակական դիտանկյունը: Ճշմարտությունը ներկայացվում է իբրև վտանգ, ընդ որում՝ ֆիզիկական ցավի ճանաչողության միջոցով: Ճշմարտության բացահայտումն առկայանում է *շարժում* հասկացույթի միջոցով: Ինչ վերաբերում է ստախոսության բնորոշմանը, այն հայերեն առածային խոսույթում առավել պատկերավոր դրսևորում է ստանում պատումների միջոցով: Ավելին, հայերենում ստի բացահայտումն աղերսվում է ներքին կառույցի անկայունությանը, իսկ ֆրանսերենում՝ արտաքին ազդեցությանը: Հատկանշական է տարածական ու ժամանակային գործոնների փոխառնչությունը, որի շրջանակում ֆիզիկական տարածությունը ճշմարտությունից ու իմացությունից «հեռավորությունն» է, իսկ ժամանակի հաշվառման դիտանկյունից՝ տարածության մեջ շարժման սահմանափակումը, ստի գոյության ժամանակային կրճատումը: Առածներում ու ասացվածքներում զգուշության՝ իբրև մարդկային հատկանիշի որոշարկումը խոսքի ներուժի դիտանկյունից առկայանում է լեզվի ճանաչողության ու փիլիսոփայության միջոցով: Մասնավորապես՝ ֆրանսերեն առածներում շեշտադրվում է խոսքի «թռիչքի» հայեցակերպը՝ տարածման նկատառումով, իսկ հայերեն առածներում խոսքը դիտարկվում է իբրև կառույց և ունեցվածք: Խոսքն առածներում ու ասացվածքներում ոչ միայն իրականության արտացոլման, այլև ստեղծման միջոց է: Մտածողություն-խոսք շղթայի պահպանումը հասկացութային դաշտում խոհեմության ցուցիչ է, ինչի անտեսումը կարող է հանգեցնել անզգույշ «սայթաքման»: Այսպիսով՝ առածային խոսույթի լեզվափիլիսոփայության ճանաչողական մեկնությունը հասկացութային փոխաբերությունների միջոցով վերհանում է մարդկային հատկանիշներ, կառուցում լեզվի ու իրականության հակադրամիասնությունը:

НАРЕ ШАЛУНЦ – *Человеческая характеристика в пословицах и поговорках: когнитивно-философский взгляд на определение языка.* – Статья посвящена лингвокогнитивному и философскому анализу определения и характеристики человеческих качеств в пословицах и поговорках, осмысленных через концептуализацию языка. Используя сравнительный метод в рамках антропоцентрического подхода, исследование рассматривает французские и армянские пословицы и поговорки, и подчеркивает роль речи как практического проявления языка в раскрытии человеческих характеристик. В статье *честность* и *лживость* рассматриваются в контексте взаимодействия философии языка и реальности, с учётом конструирования реальности и смыслообразующей функции речи. Когнитивно-прагматический подход подчеркивает значимость потенциального влияния речи в контексте категории *осторожности*. Когниция выступает инструментом онтологической, эпистемологической и этической репрезентации реальности в пространстве паремий, детерминируя человеческую сущность в контексте взаимосвязи языковой единицы и концепта. На металингвистическом уровне речь структурирует человека через концепт языка. Лингвокогнитивное изучение позволяет эксплицировать семантику философии пословичного дискурса. В концептуальной сфере пословицы и поговорки используют метафорические структуры для выявления человеческой характеристики посредством языка и его актуализации в речи. Лингвокогнитивный анализ пословичного дискурса открывает путь к интерпретации философии языка, и метафорические репрезентации в межкультурном аспекте выявляют области параллелизма и пересечения данных путей.

Ключевые слова: *философия языка, когниция, концептуальная метафора, пословичный дискурс, человеческая характеристика, честность, лживость, осторожность*

NARE SHALUNTS – *The Human Trait in Proverbs and Sayings: A Cognitive-Philosophical Insight into the Characterization of Language.* – The article focuses on the linguocognitive and philosophical analysis of the definition and characterization of human traits in proverbs and sayings through the conceptualization of language. Using a comparative method within an anthropocentric framework, the study analyzes French and Armenian proverbs and sayings, emphasizing the role of speech as a practical manifestation of language in revealing human traits. It situates *truthfulness* and *deceitfulness* within the interplay between the philosophy of language and reality, considering the construction of reality and the generation of meaning as functions of speech. Furthermore, the cognitive-pragmatic dimension highlights the influential potential of speech in relation to *cautiousness*. Cognition serves as the vehicle for the ontological, epistemological and ethical mapping of reality within proverbs, defining human nature in the context of the relationship between linguistic unit and concept. Speech, at the metalinguistic level, structures human nature via the concept of language. Consequently, linguocognitive analysis provides a means of defining the semantic framework of the philosophy of proverbial discourse. Within the conceptual field, proverbs and sayings use metaphorical structures to compress ways of characterizing human traits by language and its application: speech. Linguocognitive study of proverbial discourse provides a path for interpreting the philosophy of language, and metaphorical representations, from an intercultural perspective, reveal the domains where these pathways parallel and intersect.

Key words: *philosophy of language, cognition, conceptual metaphor, proverbial discourse, human trait, truthfulness, deceitfulness, cautiousness*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ։

Օգտագործված գրականություն / References

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, Հայաստան հրատարակչություն, 1976 [Ałayan Ē., Ardi hayereni bacʿatrakan baṙaran, Erevan, Hayastan hratarakčʿutʿyun, 1976]:

Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011 [Bediryan P., Hayeren darcvacʿkʿneri ĕndzarcʿ bacʿatrakan ba□aran, Erevan, EPH hratarakčʿutʿyun, 2011]:

Նազարյան Ա., Ֆրանսիական առածներ և ասացվածքներ ռուսերեն և հայերեն թարգմանությամբ ու համարժեքներով, Եր., Հելիոս հրատարակչություն, 1994 [Nazaryan A., Fransiakan aṙacʿner ev asacʿvacʿkʿner ruseren ev hayeren tʿargmanutʿyamb u hamaržeqnerov, Er., Helios hratarakčʿutʿyun, 1994]:

Ղանալանյան Ա., Առածանի, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1960 [Łanalyan A., Aṙacʿani, Er., Haykakan SSR GA hratarakčʿutʿyun, 1960]:

Günter R., Kövecses Z. Towards a Theory of Metonymy // Klaus-Uwe Panther and Günter Radden (eds.), Metonymy in Language and Thought, Amsterdam, Philadelphia: Benjamins, 1999, pp. 17-59.

Johnson M., Philosophy's Debt to Metaphor // The Cambridge Handbook of Metaphor and Thought, edited by Raymond W. Jibbs, 2008.

Lakoff G., Johnson M. *Philosophy* in the Flesh: The Embodied Mind and Its Challenge to Western Thought. New York, Basic Books, 1999.

Lakoff G., Turner M. More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor. Chicago, The University of Chicago Press, 1989.

Mácha J., Metaphor in Analytic Philosophy and Cognitive Science // Revista Portuguesa de Filosofia, T. 75, Fasc. 4, Modelos e Metáforas: Arte e Ciência / Models and Metaphors: Art and Science, 2019, pp. 2247-2286.

Dictionnaire de proverbes et dictons, choisis et présentés par Florence Montreynaud, Agnès Pierron et François Suzzoni, Les usuels du Robert, 1984:

Refranero multilingüe // https://cvc.cervantes.es/lengua/refranero/